**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**15 օգոստոսի 2025թ.** **N 49-Ա**
**ք. Երևան**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 16-ԻՆ ԿԱՅԱՆԱԼԻՔ ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳՈՎ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 8-րդ մասով, 51-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 13-րդ կետերով, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2025 թվականի օգոստոսի 12-ի «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու ընտրություններ նշանակելու մասին» Ն ՄՈ 789-Ա որոշումը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.**

1. Հաստատել Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 16-ին կայանալիք համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրության նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ**
**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ** **Վ. ՀՈՎԱԿԻՄՅԱՆ**

*Հավելված*
*Հայաստանի Հանրապետության*
*կենտրոնական ընտրական հանձնաժողովի*
*2025թ. օգոստոսի 15-ի N 49-Ա որոշման*

**Արմավիրի մարզի Վաղարշապատ համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 16-ին կայանալիք համամասնական ընտրակարգով անցկացվող ընտրության նախապատրաստման և անցկացման հիմնական միջոցառումների**

## ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/Հ | Միջոցառման բովանդակությունը | ՀՀ ԸՕ հոդված ԿԸՀՈ | Կատարման ժամկետը (ներառյալ) | Կատարողը |
|---|---|---|---|---|
| 1 | Դիտորդների հավատարմագրման վերաբերյալ դիմումները՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքի միջոցով, Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են. ***ընտրություններ նշանակելու օրվանից հետո, սակայն ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 10 օր առաջ*** | 31, մաս 2 ԿԸՀՈ N 3-Ն 21.01.2022 թ | **13.08.2025-ից մինչև 6.11.2025** | Միջազգային կազմակերպություններ, օտարերկրյա հասարակական կազմակերպություններ, Հայաստանի Հանրապետության հասարակական կազմակերպություններ և հիմնադրամներ |
| 2 | Հավատարմագրված դիտորդների ցանկում փոփոխություններ (լրացումներ) կատարելու մասին դիմումները Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են. ***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 3 օր առաջ***<br><br>***Ուղեցույց*** *Հավատարմագրված կազմակերպությանը տրամադրված օգտահաշվով գրանցումներ կատարելու հնարավորությունը կասեցվում է քվեարկության օրվանից 3 օր առաջ* | 31, մաս 2 ԿԸՀՈ N 3-Ն, 21.01.2022 թ | **մինչև 13.11.2025** | Միջազգային կազմակերպություններ, օտարերկրյա հասարակական կազմակերպություններ, Հայաստանի Հանրապետության հասարակական կազմակերպություններ և հիմնադրամներ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3 | Քվեարկության օրն ընտրությունների և քվեարկության վերաբերյալ լուսաբանում իրականացնելու համար հավատարմագրման վերաբերյալ դիմումը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքի միջոցով Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է.<br>***ընտրություններ նշանակելու օրվանից հետո, բայց ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 10 օր առաջ*** | 31, մաս 8<br>ԿԸՀՈ 7-Ն<br>27.01.2022 | **13.08.2025-ից մինչև 6.11.2025** | Լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձ |
| 4 | Զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների ցուցակը կարող է փոփոխվել<br>***քվեարկության օրվանից մինչև 3 օր առաջ***<br><br>***Ուղեցույց*** *Հավատարմագրված կազմակերպությանը տրամադրված օգտահաշվով գրանցումներ կատարելու հնարավորությունը կասեցվում է քվեարկության օրվանից 3 օր առաջ* | 31, մաս 8<br>ԿԸՀՈ 7-Ն<br>27.01.2022 | **մինչև 13.11.2025** | Լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձ |
| 5 | Կուսակցությունը, կուսակցությունների դաշինքն ընտրություններին մասնակցելու դիմում ներկայացնելու համար օգտահաշիվ ստանալու նպատակով էլեկտրոնային եղանակով դիմում Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնում է.<br>***ընտրությունների ժամանակացույցը ԿԸՀ կայքում հրապարակելուց հետո, բայց ոչ ուշ, քան ընտրական ցուցակների գրանցման համար փաստաթղթերը ներկայացնելու համար սահմանված վերջնաժամկետը***<br><br>***Ուղեցույց*** *Օգտահաշվով գրանցումներ կատարելու վերջնաժամկետը ընտրական ցուցակների գրանցման համար փաստաթղթերն ընտրական հանձնաժողով ներկայացնելու համար սահմանված վերջնաժամկետն է, որից հետո օգտահաշվով գրանցումներ կատարելու հնարավորությունը կասեցվում է* | 130, մաս 4.1<br>ԿԸՀՈ Ն 3-Ա<br>31.01.2023թ | **16.08.2025-ից մինչև 12.10.2025 մինչև 18:00-ն** | Կուսակցություն, կուսակցությունների դաշինք |
| 6 | Ընտրողների թվի վերաբերյալ տեղեկանք՝ ըստ համայնքների Կենտրոնական ընտրական հանձնաժողովին տրամադրվում է.<br>***ընտրություն նշանակվելուց հետո՝ 5-օրյա ժամկետում*** | 12, մաս 2, պարբ. 2 | **մինչև 18.08.2025** | Լիազոր մարմին |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 7 | Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) տրամադրվող 5 քառակուսի մետրը գերազանցող մակերեսով, ինչպես նաև մետրոպոլիտենի տարածքում և հասարակական տրանսպորտի կանգառներում տեղակայված վահանակների քանակի, մակերեսների, դրանց գտնվելու վայրերի և վարձավճարների վերաբերյալ տեղեկատվությունը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է.<br>***ընտրությունները նշանակվելուց հետո՝ 10-օրյա ժամկետում*** | 21, մաս 6 ԿԸՀՈ N 21-Ն 27.03.2025թ | **մինչև 23.08.2025** | Արտաքին գովազդային վահանակները տնօրինող կազմակերպություններ |
| 8 | Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում ընտրություններին մասնակցող կուսակցություններին (կուսակցությունների դաշինքներին) տրամադրվող 5 քառակուսի մետրը գերազանցող մակերեսով, ինչպես նաև մետրոպոլիտենի տարածքում և հասարակական տրանսպորտի կանգառներում տեղակայված վահանակների քանակի, մակերեսների, դրանց գտնվելու վայրերի և վարձավճարների վերաբերյալ ստացված տեղեկությունների ցանկը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրում է.<br>***ներկայացվելուց հետո մինչև հաջորդ աշխատանքային օրվա ավարտը, սակայն ոչ ուշ, քան ընտրական ցուցակների գրանցման փաստաթղթերը ներկայացնելու համար սահմանված ժամկետի սկիզբը*** | 21, մաս 6 ԿԸՀՈ N 21-Ն 27.03.2025թ | **մինչև 24.08.2025 - սական ոչ ուշ քան 1.10.2025** | Կենտրոնական ընտրական հանձնաժողով |
| 9 | Կուսակցությունները, կուսակցությունների դաշինքներն ընտրական ցուցակների գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացնում են.<br>***քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 45, և ոչ ուշ, քան 35 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն*** | 127, մաս 4 ԿԸՀՈ N 207-Ն, 26.08.2021թ | **2.10.2025 - 12.10.2025 մինչև ժամը 18:00** | Կուսակցության, կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 10 | Կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները 5 քառակուսի մետրը գերազանցող մակերեսով, ինչպես նաև մետրոպոլիտենի տարածքում և հասարակական տրանսպորտի կանգառներում տեղակայված վահանակներում քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր տեղադրելու համար հայտերը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնում են.<br>***քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 45, և ոչ ուշ, քան 35 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն*** | 21, մաս 6<br>127, մաս 4<br>ԿԸՀՈ N 21-Ն, 27.03.2025թ | **2.10.2025 - 12.10.2025 մինչև ժամը 18:00** | Կուսակցության, կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ |
| 11 | Ընտրական տեղամասերը կազմավորվում են.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 45 օր առաջ*** | 16, մաս 1 | **մինչև 2.10.2025** | Լիազոր մարմին, մասնակցությամբ համայնքի ղեկավարի և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի անդամի |
| 12 | Ընտրողների թվի վերաբերյալ տեղեկանքը՝ ըստ համայնքների Կենտրոնական ընտրական հանձնաժողովին տրամադրվում է.<br>***ընտրական տեղամասերը կազմավորելուց հետո 2-օրյա ժամկետում*** | 12, մաս 2, պարբ. 4 | **մինչև 4.10.2025** | Լիազոր մարմին |
| 13 | Տեղամասային կենտրոնները սահմանվում են.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 43 օր առաջ*** | 18, մաս 1, 2.1<br>ԿԸՀՈ N 17-Ն 24.03.2022թ | **մինչև 4.10.2025** | Համայնքի ղեկավար |
| 14 | Ընտրական տեղամասերի հերթական համարները սահմանվում և Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են.<br>***սահմանվելուց հետո երկօրյա ժամկետում*** | 52, մաս 1, կետ 3 | **մինչև 6.10.2025** | Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով |
| 15 | ՀՀ ընտրողների ռեգիստրը՝ ըստ ընտրական տեղամասերի, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում որոնման հնարավորությամբ տեղադրելու համար՝ էլեկտրոնային եղանակով Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 41 օր առաջ*** | 9, մաս 4 | **մինչև 6.10.2025** | Լիազոր մարմին |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 16 | ՀՀ ընտրողների ռեգիստրը՝ ըստ ընտրական տեղամասերի, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում՝ որոնման հնարավորությամբ տեղադրվում է.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 41 օր առաջ*** | 9, մաս 4 | **մինչև 6.10.2025** | Կենտրոնական ընտրական հանձնաժողով |
| 17 | Նախընտրական քարոզչություն իրականացնելու համար կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին եթերաժամ տրամադրող մասնավոր հիմունքներով (այդ թվում՝ կաբելային (մալուխային) ցանցով, արբանյակային կապով և վերգետնյա եթերային) հեռարձակում իրականացնող տեսալսողական մեդիածառայություն մատուցողների կողմից իրենց վճարովի եթերաժամի մեկ րոպեի արժեքն իրենց եթերով հրապարակվում է.<br>***ոչ ուշ, քան ընտրական ցուցակների գրանցման ժամկետի հաշվարկի սկզբից 5 օր առաջ*** | 20, մաս 6 պարբ. 2 | **մինչև 7.10.2025** | Մասնավոր հիմունքներով հեռուստառադիոհեռարձակում իրականացնող տեսալսողական մեդիածառայություն մատուցողներ<br><br>վերահսկողություն ՀՌՀ |
| 18 | Կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին անվճար հիմունքներով տրամադրվող դահլիճների և այլ շինությունների ցանկը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 40 օր առաջ*** | 19, մաս 3 ԿԸՀՈ N 208-Ն 26.08.2021թ. | **մինչև 7.10.2025** | Մարզպետ |
| 19 | Տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող ընտրողների համար մատչելի ընտրական տեղամասերի ցանկը հրապարակվում է.<br>***ոչ ուշ, քան քվեարկության օրվանից 40 օր առաջ*** | 10, մաս 3.1 | **մինչև 7.10.2025** | Կենտրոնական ընտրական հանձնաժողով |
| 20 | Ընտրողների ցուցակը տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին տրամադրվում է.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 40 օր առաջ*** | 12, մաս 1 | **մինչև 7.10.2025** | Լիազոր մարմին |
| 21 | Ընտրողների ցուցակը տեղամասային կենտրոնում՝ բոլորի համար տեսանելի տեղում փակցվում է.<br>***քվեարկության օրվանից 40 օր առաջ*** | 13, մաս 3 | **7.10.2025** | Տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետող |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 22 | Ընտրողների նախնական ցուցակը՝ ըստ ընտրական տեղամասերի, ներբեռնելու հնարավորությամբ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության համացանցային կայքում տեղադրվում է.<br>***քվեարկության օրվանից 40 օր առաջ*** | 13, մաս 2 | **7.10.2025** | Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություն |
| 23 | Ընտրողների նախնական ցուցակը՝ ըստ ընտրական տեղամասերի, ներբեռնելու հնարավորությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրվում է.<br>***քվեարկության օրվանից 40 օր առաջ*** | 13, մաս 2 | **7.10.2025** | Կենտրոնական ընտրական հանձնաժողով |
| 24 | Կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին անվճար հիմունքներով տրամադրվող դահլիճների և այլ շինությունների ցանկը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում տեղադրվում է.<br>***ցանկը ներկայացնելու համար սահմանված ժամկետից հետո՝ մինչև հաջորդ օրվա ավարտը*** | 19, մաս 3 | **մինչև 8.10.2025** | Կենտրոնական ընտրական հանձնաժողով |
| 25 | Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակների գրանցումը կատարվում է.<br>***քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 35, և ոչ ուշ, քան 30 օր առաջ*** | 127, մաս 5 | **12.10.2025 - 17.10.2025** | Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով |
| 26 | Համայնքի տարածքում քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր տեղադրելու համար անվճար վահանակներ առանձնացնելու մասին որոշումն ընդունվում է.<br>***նախընտրական քարոզչությունն սկսելուց 10 օր առաջ*** | 21, մաս 3 | **մինչև 12.10.2025** | Համայնքի ղեկավար |
| 27 | 4 000 և ավելի ընտրող ունեցող համայնքի դեպքում, քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր տեղադրելու համար անվճար վահանակներ առանձնացնելու մասին համայնքի ղեկավարի որոշումը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է.<br>***որոշումն ընդունելուց հետո՝ եռօրյա ժամկետում*** | 21, մաս 4 | **մինչև 15.10.2025** | Համայնքի ղեկավար |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 28 | Տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և քարտուղարների պաշտոնների բաշխումը՝ ըստ ընտրական տեղամասերի կատարվում է.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 30 օր առաջ*** | 44, մաս 5, | **մինչև 16.10.2025** | Կենտրոնական ընտրական հանձնաժողով |
| 29 | Տեղամասային ընտրական հանձնաժողովում անդամներ նշանակելու մասին հայտերը Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են.<br>***քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 30, և ոչ ուշ, քան 25 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն*** | 44, մաս 6<br>ԿԸՀՈ N 138-Ն,<br>22.11.2016թ. | **17.10.2025 - 22.10.2025 մինչև ժամը 18:00** | Աժ խմբակցություն ունեցող կուսակցու-թյուններ (կուսակցու-թյունների դաշինքներ), ընտրատարածքային ընտրական հանձնաժողով |
| 30 | Ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին հերթական համարներ տրամադրվում են.<br>***ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետի հաջորդ օրը*** | 140, մաս 2 | **18.10.2025-ին** | Կենտրոնական ընտրական հանձնաժողով |
| 31 | Արտաքին գովազդային վահանակներում քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր տեղադրելու իրավունքն ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) միջև բաշխվում է<br>***ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետի հաջորդ օրը*** | 21, մաս 6<br>ԿԸՀՈ N 21-Ն,<br>27.03.2025թ | **18.10.2025-ին** | Կենտրոնական ընտրական հանձնաժողով |
| 32 | Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակները Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում հրապարակվում են.<br>***ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետն ավարտվելուց հետո՝ եռօրյա ժամկետում*** | 131, մաս 2 | **մինչև 20.10.2025** | Կենտրոնական ընտրական հանձնաժողով |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 33 | Ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների կազմում ընդգրկված կուսակցությունների բանկային հաշիվների ֆինանսական միջոցների մնացորդի, մուտքերի և ելքերի վերաբերյալ տվյալները համապատասխան բանկերը **Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով** ներկայացնում են.<br>***ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ մինչև քվեարկությունից հետո՝ երրորդ օրը՝ 3 աշխատանքային օրը մեկ***<br><br>***Ուղեցույց*** *Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն ամփոփում է այդ տվյալները, կազմում ամփոփ տեղեկանք, որը տեղադրվում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի համացանցային կայքում* | 26, մաս 10 | **20.10.2025-ին և դրանից հետո 3 աշխատանքային օրը մեկը, մինչև 19.11.2025** | Նախընտրական հիմնադրամ ձևավորելու նպատակով ժամանակավոր հատուկ հաշիվներ բացած առևտրային բանկեր |
| 34 | Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշման հիման վրա ընտրություններին մասնակցող կուսակցությունը, կուսակցությունների դաշինքն արտաքին գովազդային վահանակը տնօրինող կազմակերպության հետ քարոզչական պաստառ, քարոզչական տպագիր և այլ նյութեր տեղադրելու համար **պայմանագիր կնքում է.**<br>***վահանակների բաշխման մասին որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռօրյա ժամկետում*** | 21, մաս 6 | **մինչև 21.10.2025** | Կուսակցության, կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ<br><br>Գովազդային վահանակը տնօրինող կազմակերպության |
| 35 | Կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները Երևանում և հանրապետության բոլոր մարզերում մասնաճյուղ ունեցող որևէ առևտրային բանկում նախընտրական հիմնադրամ **պարտավոր են բացել**.<br>***ընտրական ցուցակը գրանցելու վերաբերյալ որոշումն ընդունելուց հետո՝ 5 օրվա ընթացքում*** | 26, մաս 1 | **մինչև 22.10.2025, որը վերջնաժամկետն է** | Կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ |
| 36 | Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է.<br>***ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող 5-րդ օրը, ավարտվում՝ քվեարկության օրվանից 1 օր առաջ*** | 19, մաս 1 | **22.10.2025 - 14.11.2025 մինչև ժամը 24:00** | Ընտրողներ, թեկնածուներ, կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 37 | Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամների ֆինանսական մուտքերի և ելքերի վերաբերյալ տեղեկանք Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացվում է.<br>***ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից 5 օր հետո՝ 3 աշխատանքային օրը մեկ*** | 26, մաս 8 | **25.10.2025 -ից սկսած երեք աշխատանքային օրը մեկ** | Նախընտրական հիմնադրամ ձևավորելու նպատակով ժամանակավոր հատուկ հաշիվներ բացած առևտրային բանկեր |
| 38 | Տեղամասային ընտրական հանձնաժողովի առաջին նիստը տեղամասային կենտրոնում հրավիրվում է.<br>***կազմավորման օրվանից հետո՝ 3-րդ օրը, ժամը 12.00-ին*** | 44, մաս 7 | **25.10.2025-ին ժամը 12:00-ին** | Տեղամասային ընտրական հանձնաժողով |
| 39 | Կուսակցության, կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակներում ընդգրկված ավագանու անդամի թեկնածուներն իրենց գույքի և եկամուտների մասին հայտարարագիրը համատապասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացնում են.<br>***ընտրական ցուցակների ռանցման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ 10 օրվա ընթացքում*** | 8, մաս 5<br>ԿԸՀՈ N 31-Ն<br>27.03.25թ. | **մինչև 27.10.2025** | Ավագանու անդամի թեկնածուներ |
| 40 | Կուսակցությունները, կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունները կուսակցության գույքի և եկամուտների մասին հայտարարագիր Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացնում են.<br>***ընտրական ցուցակների գրանցման համար սահմանված ժամկետի ավարտից հետո՝ 10 օրվա ընթացքում*** | 8, մաս 5<br>ԿԸՀՈ N 209-Ն,<br>26.08.2021թ | **մինչև 27.10.2025** | Կուսակցության, կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ |
| 41 | Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքում ընդգրկված կուսակցությունների կուսակցության գույքի և եկամուտների մասին հայտարարագրերը, ընտրական ցուցակներում ընդգրկված թեկնածուների գույքի և եկամուտների մասին հայտարարագրերը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրվում են.<br>***հայտարարագիրը ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում*** | 8, մաս 6 | **մինչև 30.10.2025** | Կենտրոնական ընտրական հանձնաժողով |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 42 | Կուսակցությունները, կուսակցությունների դաշինքներն իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացնում են.<br>***նախընտրական քարոզչությունն սկսվելուց հետո՝ 10-րդ օրը*** | 28, մաս 1 | **31.10.2025-ին** | Կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ |
| 43 | Ընտրողների թվի վերաբերյալ տեղեկանք՝ ըստ համայնքների և ընտրական տեղամասերի Կենտրոնական ընտրական հանձնաժողովին և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին տրամադրվում է.<br>***քվեարկության օրվանից 15 օր առաջ*** | 12, մաս 2, պարբ. 4 | **1.11.2025-ին** | Լիազոր մարմին |
| 44 | Տվյալ համայնքում ընտրելու իրավունք ունեցող տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամներն իրենց նշանակող կուսակցությանը կամ ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին, իսկ տեխնիկական սարքավորումն սպասարկող մասնագետները ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին՝ ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից ժամանակավորապես դուրս գալու և ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկվելու մասին իրենց դիմումը լիազոր մարմին ներկայացնելու համար կարող են ներկայացնել.<br>***քվեարկության օրվանից առնվազն 14 օր առաջ*** | 10, մաս 4 ԿԸՀՈ N 11-Ն, 27.03.25թ. | **մինչև 2.11.2025** | Տվյալ համայնքում ընտրելու իրավունք ունեցող տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամներ, տեխնիկական սարքավորումն սպասարկող մասնագետներ |
| 45 | Նույն համայնքի այլ բնակավայրի հաշվառում ունեցող ընտրողները ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից ժամանակավորապես դուրս գալու և ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ավելացվելու մասին դիմում լիազոր մարմնի կամ նրա համապատասխան ստորաբաժանման ղեկավարին կարող են ներկայացնել.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 12 օր առաջ՝ մինչև ժամը 14:00-ն*** | 10, մաս 3 ԿԸՀՈ N 11-Ն, 27.03.25թ. | **մինչև 4.11.2025 մինչև ժամը 14:00-ն** | Նույն համայնքի այլ բնակավայրի հաշվառում ունեցող ընտրողներ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 46 | Տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող ընտրողները՝ ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից ժամանակավորապես դուրս գալու և ըստ իրենց նախընտրած վայրի մատչելի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկվելու մասին դիմում լիազոր մարմին կարող են ներկայացնել՝<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 12 օր առաջ՝***<br>***մինչև ժամը 14:00-ն*** | 10, մաս 3.1<br>ԿԸՀՈ N 11-Ն,<br>27.03.25թ. | **մինչև 4.11.2025 մինչև ժամը 14:00-ն** | Տեղաշարժման (հենաշարժական) դժվարություններ ունեցող ընտրողներ |
| 47 | Տվյալ համայնքում ընտրելու իրավունք ունեցող տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամները և տեխնիկական սարքավորումն սպասարկող մասնագետները ըստ հաշվառման վայրի ընտրողների ցուցակից ժամանակավորապես դուրս գալու և ըստ գտնվելու վայրի ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընդգրկվելու մասին դիմում լիազոր մարմին կարող են ներկայացնել<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 12 օր առաջ՝***<br>***մինչև ժամը 14.00-ն*** | 10, մաս 4<br>ԿԸՀՈ N 11-Ն,<br>27.03.25թ. | **մինչև 4.11.2025 մինչև ժամը 14:00-ն** | Տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամներ, տեխնիկական սարքավորումն սպասարկող մասնագետներ |
| 48 | Ընտրողների ցուցակներում տեղ գտած անճշտությունները (այդ թվում՝ դիմողի անձին չվերաբերող) վերացնելու մասին դիմում լիազոր մարմին ներկայացվում է.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 12 օր առաջ*** | 14, մաս 1 | **մինչև 4.11.2025** | Ընտրողներ,<br>Լիազոր մարմին |
| 49 | Թեկնածուները, կուսակցությունները, կուսակցությունների դաշինքները կամ դաշինքի անդամ կուսակցություններն ինքնաբացարկի մասին դիմում կարող են ներկայացնել.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 10 օր առաջ՝***<br>***մինչև ժամը 18.00-ն*** | 137, մաս 2 | **մինչև 6.11.2025 մինչև ժամը 18:00-ն** | Թեկնածուներ, կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ |
| 50 | Քվեաթերթիկների նմուշները սահմանվում են.<br>***քվեարկության օրվանից առաջ 10-րդ օրը*** | 52, մաս 1,<br>կետ 2 | **6.11.2025-ին** | Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 51 | Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի ստուգման արդյունքներով վերահսկիչ-վերստուգիչ ծառայության եզրակացությունը կազմվում և Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է.<br>***հայտարարագրերը ստանալուց հետո՝ 7 օրվա ընթացքում*** | 29, մաս 5 | **մինչև 7.11.2025-ը** | Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն |
| 52 | Տեղամասային ընտրական հանձնաժողովին տրամադրվող ընտրողների գրանցում իրականացնող տեխնիկական սարքավորման մեջ ներբեռնվող՝ էլեկտրոնային եղանակով կազմված ընտրողների ցուցակները Կենտրոնական ընտրական հանձնաժողովին տրամադրվում է.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 8 օր առաջ*** | 12, մաս 2, պարբ. 5 | **մինչև 8.11.2025** | Լիազոր մարմին |
| 53 | Քվեաթերթիկների տպագրման համար ընտրողների թվի վերաբերյալ տեղեկանք՝ ըստ համայնքների և ընտրական տեղամասերի Կենտրոնական ընտրական հանձնաժողովին և ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին տրամադրվում է.<br>***քվեարկության օրվանից առաջ 8-րդ օրը*** | 12, մաս 2, պարբ. 4<br>59, մաս 5 | **8.11.2025-ին** | Լիազոր մարմին |
| 54 | Քվեաթերթիկները տպագրվում են.<br>***քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 8, և ոչ ուշ, քան 3 օր առաջ*** | 59, մաս 4, 5 | **8.11.2025 - 13.11.2025** | Կենտրոնական ընտրական հանձնաժողով |
| 55 | ՀՀ ընտրողների ռեգիստրը՝ ըստ ընտրական տեղամասերի, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում որոնման հնարավորությամբ տեղադրելու համար՝ էլեկտրոնային եղանակով Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է ՝<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 7 օր առաջ*** | 9, մաս 4 | **9.11.2025-ին** | Լիազոր մարմին |
| 56 | ՀՀ ընտրողների ռեգիստրը՝ ըստ ընտրական տեղամասերի, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում՝ որոնման հնարավորությամբ տեղադրվում է.<br>***քվեարկության օրվանից ոչ ուշ, քան 7 օր առաջ*** | 9, մաս 4 | **9.11.2025-ին** | Կենտրոնական ընտրական հանձնաժողով |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 57 | Ընտրողների վերջնական ցուցակը՝ ըստ ընտրական տեղամասերի, ներբեռնելու հնարավորությամբ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության համացանցային կայքում տեղադրվում է.<br>***քվեարկության օրվանից 7 օր առաջ*** | 13, մաս 2 | **9.11.2025-ին** | Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություն |
| 58 | Ընտրողների վերջնական ցուցակը՝ ըստ ընտրական տեղամասերի, ներբեռնելու հնարավորությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրվում է.<br>***քվեարկության օրվանից 7 օր առաջ*** | 13, մաս 2 | **9.11.2025-ին** | Կենտրոնական ընտրական հանձնաժողով |
| 59 | Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը, քարտուղարը կամ հանձնաժողովի անդամն այդ պաշտոնից ինքնաբացարկի մասին դիմում ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի նախագահին կարող է ներկայացնել.<br>***մինչև քվեարկության օրվան նախորդող 5-րդ օրվա ժամը 18.00-ն*** | 45, մաս 6<br>կետ 3 | **մինչև 11.11.2025<br>մինչև ժամը 18:00-ն** | Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ, քարտուղար, հանձնաժողովի անդամ |
| 60 | Կուսակցությունները, կուսակցությունների դաշինքներն իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացնում են.<br>***նախընտրական քարոզչությունն սկսվելուց հետո՝ 20-րդ օրը*** | 28, մաս 1 | **10.11.2025-ին** | Կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ |
| 61 | Տեղամասային ընտրական հանձնաժողովների կնիքները՝ յուրաքանչյուր ընտրական տեղամասին մեկ կնիք հաշվարկով և տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների անհատական կնիքներն ընտրատարածքային ընտրական հանձնաժողովին հանձնվում են.<br>***քվեարկությոան օրվանից ոչ շուտ, քան 5, և ոչ ուշ, քան 3 օր առաջ*** | 60, մաս 4 | **11.11.2025 - 13.11.2025** | Կենտրոնական ընտրական հանձնաժողով |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 62 | Ընտրողը քվեարկության օրը կազմվող ընտրողների լրացուցիչ ցուցակում ընդգրկվելու մասին դիմում լիազոր մարմին իրավունք ունի ներկայացնելու.<br>***քվեարկության օրվան նախորդող 5 օրվա ընթացքում, ինչպես նաև քվեարկության օրը՝ մինչև քվեարկության ավարտը*** | 14, մաս 2 | **11.11.2025-ից մինչև 16.11.2025-ը, մինչև 20.00** | Ընտրողներ, Լիազոր մարմին |
| 63 | Նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրվում են.<br>***հայտարարագրերը ներկայացնելուց հետո՝ եռօրյա ժամկետում.*** | 28, մաս 4 | **մինչև 3.11.2025-ը 13.11.2025-ը և 23.11.2025** | Կենտրոնական ընտրական հանձնաժողով |
| 64 | Տեղամասային կենտրոնում փակցվող և տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից գործածվող ընտրողների ցուցակները՝ կազմված մատյանի ձևով՝ ըստ ընտրական տեղամասերի, և ընտրական տեղամասում ընդգրկված բնակելի շենքերի (տների) հասցեները, ինչպես նաև քվեարկության օրն ընտրական տեղամասում ընտրողների լրացուցիչ ցուցակներ կազմելու համար անհրաժեշտ ձևաթղթերը տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին տրամադրվում են.<br>***քվեարկության օրվանից 3 օր առաջ*** | 12, մաս 3 | **13.11.2025-ին** | Լիազոր մարմին |
| 65 | Ընտրողների ցուցակի օրինակը տեղամասային կենտրոնում բոլորի համար տեսանելի տեղում փակցվում է.<br>***քվեարկության օրվանից 2 օր առաջ*** | 13, մաս 4 | **14.11.2025-ին** | Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ |
| 66 | Քվեարկության սենյակի կահավորումն ավարտվում է.<br>***քվեարկության նախորդ օրը՝ մինչև ժամը 24.00-ն*** | 57, մաս 3 | **15.11.2025-ին մինչև ժամը 24:00** | Համայնքի ղեկավար, տեղամասային ընտրական հանձնաժողով |
| 67 | Տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին քվեաթերթիկները, քվեարկության ծրարները, ինքնասոսնձվող դրոշմանիշերը, հանձնաժողովի կնիքը, հանձնաժողովի անդամների անհատական կնիքները, տեխնիկական սարքավորումները հանձնվում են.<br>***քվեարկության նախորդ օրը*** | 59, մաս 6<br>60, մաս 5, 7 | **15.11.2025-ին** | Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 68 | Նախընտրական հիմնադրամների հաշիվների հետ կապված բոլոր գործառնությունները դադարեցվում են.<br>***քվեարկության օրվանից*** | 27, մաս 7 | **16.11.2025-ից** | Նախընտրական հիմնադրամ ձևավորելու նպատակով ժամանակավոր հատուկ հաշիվներ բացած առևտրային բանկեր |
| 69 | Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի ստուգման արդյունքներով վերահսկիչ-վերստուգիչ ծառայության եզրակացությունը կազմվում և Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է.<br>***հայտարարագրերը ստանալուց հետո՝ 7 օրվա ընթացքում*** | 29, մաս 5 | **մինչև 16.11.2025-ը** | Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն |
| 70 | Քվեարկության օրը տեղամասային կենտրոնում տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստն սկսվում է.<br>***քվեարկության օրը՝ ժամը 07:00-ին*** | 64, մաս 1 | **16.11.2025-ին ժամը 07.00-ին** | Տեղամասային ընտրական հանձնաժողով |
| 71 | **Քվեարկությունն սկսվում է**<br>***քվեարկության օրը ժամը՝ 08:00-ից*** | 56, մաս 1<br>65, մաս 1 | **16.11.2025-ին ժամը 08.00-ից** | Տեղամասային ընտրական հանձնաժողով |
| 72 | Քվեարկությանը մասնակցած ընտրողների թվի մասին տեղեկությունը՝ ըստ ընտրական տեղամասերի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում տեղադրվում է<br>***քվեարկության օրը*** | 8, մաս 9 | **16.11.2025-ին ժամը 12:00-ին, 15:00-ին, 18:00-ին և 21:00-ին** | Կենտրոնական ընտրական հանձնաժողով |
| 73 | **Քվեարկությունն ավարտվում է.**<br>***քվեարկության օրը ժամը՝ 20:00-ին*** | 56, մաս 1<br>68, մաս 1 | **16.11.2025-ին ժամը 20:00-ին** | Տեղամասային ընտրական հանձնաժողով |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 74 | Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության կազմումն ավարտվում և արձանագրությունը հրապարակվում է.<br>***ոչ ուշ, քան քվեարկության ավարտից 12 ժամ հետո*** | 71, մաս 5 | **17.11.2025 մինչև ժամը 08:00** | Տեղամասային ընտրական հանձնաժողով |
| 75 | Ընտրական փաստաթղթերի մեկանգամյա օգտագործման պարկը, ընտրողների ցուցակների փաթեթը, չօգտագործված քվեարկության ծրարների փաթեթը, չօգտագործված քվեաթերթիկները, քվեարկության արդյունքների արձանագրության 2 օրինակը, արձանագրության մեկ քաղվածքը, գրանցամատյանը, հանձնաժողովի կնիքը, տեխնիկական սարքավորումներն ընտրատարածքային ընտրական հանձնաժողով ներկայացվում են.<br>***քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 14 ժամվա ընթացքում*** | 71, մաս 9 | **17.11.2025 մինչև ժամը 10:00** | Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ և քարտուղար |
| 76 | Համայնքում ընտրությունների քվեարկության նախնական արդյունքներն ամփոփվում և արձանագրությամբ վավերացվում են.<br>***քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 18 ժամվա ընթացքում*** | 74, մաս 1 | **17.11.2025 մինչև ժամը 14:00** | Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով |
| 77 | Ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների արձանագրությունների տվյալների մուտքագրումը համակարգիչ ավարտվում է.<br>***քվեարկության ավարտից հետո՝ ոչ ուշ, քան 20 ժամվա ընթացքում*** | 73, մաս 2 | **17.11.2025 մինչև ժամը 16:00** | Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով |
| 78 | Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու դիմում համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով կարող է ներկայացվել.<br>***քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն, կամ քվեարկությունից հետո երկրորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն*** | 48, մաս 12, 14 | **17.11.2025 -ին ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00 կամ 18.11.2025 -ին ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն** | Կուսակցություն, կուսակցությունների դաշինք, ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածու, վստահված անձ համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 79 | Այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմումն իրավասու անձը համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով կարող է ներկայացնել.<br>***քվեարկության հաջորդ օրը ժամը 12.00-ից մինչև քվեարկության օրվանից հետո երրորդ օրը՝ ժամը 11.00-ն*** | 48, մաս 16 | **17.11.2025-ին ժամը 12.00-ից մինչև 19.11.2025 -ը՝ ժամը 11.00-ն** | Կուսակցության, կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցիչ, վստահված անձ, համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ, քվեարկությանը չմասնակցած ընտրող |
| 80 | Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի դիմում համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով կարող է ներկայացվել.<br>***քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն, կամ քվեարկությունից հետո 2 օրը՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն*** | 50, մաս 1 | **17.11.2025 -ին ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00 կամ 18.11.2025 -ին ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն** | Թեկնածու, վստահված անձ, տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ |
| 81 | Նախընտրական քարոզչության նպատակով չկատարված պայմանագրային պարտավորությունների կատարման համար հիմնադրամի միջոցների չբավարարող գումարի չափով նախընտրական հիմնադրամը համալրելու դիմում Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է.<br>***ոչ ուշ, քան քվեարկությունից հետո՝ երկօրյա ժամկետում*** | 27, մաս 8 | **մինչև 18.11.2025** | Կուսակցություններ, կուսակցությունների դաշինքներ |
| 82 | Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովներում վերահաշվարկի աշխատանքներն սկսվում են.<br>***վերահաշվարկի դիմումների ընդունման համար սահմանված վերջնաժամկետի օրը՝ ժամը 14.00-ից, և դադարեցվում են քվեարկության օրվանից հետո՝ 5-րդ օրը՝ ժամը 14.00-ին*** | 50, մաս 6 | **18.11.2025 ժամը 14:00-ից - 21.11.2025 մինչև ժամը 14:00** | Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով |
| 83 | Տեղամասային ընտրական հանձնաժողովների կնիքները Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում են.<br>***քվեարկության ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում*** | 60, մաս 6 | **մինչև 19.11.2025** | Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 84 | Կուսակցությունները, կուսակցությունների դաշինքներն իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագիրը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն ներկայացնում են.<br>***ընտրությունների արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 3 օր առաջ*** | 28, մաս 1 | **մինչև 20.11.2025** | Կուսակցություն, Կուսակցությունների դաշինք |
| 85 | Համայնքում ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում՝ համապատասխան ընտրատարածքային ընտրական հանձնաժողով կարող է ներկայացվել.<br>***ընտրության արդյունքներն ամփոփելու համար սահմանված ժամկետից առնվազն 2 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն*** | 48, մաս 13, 15 | **21.11.2025 մինչև ժամը 18.00-ն** | Կուսակցություն, կուսակցությունների դաշինք |
| 86 | Կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերի ստուգման արդյունքներով վերահսկիչ-վերստուգիչ ծառայության եզրակացությունը կազմվում և Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացվում է.<br>***հայտարարագրերը ստանալուց հետո՝ 7 օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան ընտրության արդյունքների ամփոփման համար սահմանված ժամկետից մեկ օր առաջ*** | 29, մաս 5 | **մինչև 22.11.2025** | Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն |
| 87 | Համայնքում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը կազմվում է.<br>***քվեարկության օրվանից հետո՝ 7-րդ օրը*** | 74, մաս 2 | **23.11.2025-ին** | Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով |
| 88 | Համայնքում քվեարկության արդյունքներն ամփոփվում և ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշումն ընդունվում է.<br>***քվեարկության օրվանից հետո՝ 7-րդ օրը*** | 74, մաս 6<br>141, մաս 2 | **23.11.2025-ին** | Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 89 | Համամասնական ընտրակարգով անցկացվող համայնքների ավագանու անդամ ընտրված թեկնածուների մասին արձանագրությունը կազմվում է.<br>***ավագանի ընտրվելու մասին որոշման վիճարկման համար սահմանված ժամկետի ավարտին հաջորդող 5-րդ օրը, իսկ այդ որոշման վիճարկման դեպքում՝ համապատասխան որոշումն ընդունելուն հաջորդող 5-րդ օրը*** | 141, մաս 6 | **1.12.2025 վիճարկման դեպքում 8.12.2025** | Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով |